'ի Կեսարիա և անտի 'ի Կոստանդինուպոլիս ('ի 25 Մայիսի), և 'ի ճանապարհին խօսեցաւ Եղիա Գրիգորի բազում ինչ, քամահրելով և բասրելով զանհմուտ և զանխոհեմ կառավարութիւնս Գաբրիէլ Պատրիարքի, միշտ արդարացուցանելով զինքն, և նորա գոլով անտեղեակ բարուց եւ բնաւորութեան նորին, զորմէ գրեալ էր Գաբրիէլ Պատրիարք առ ազգային Կոստանդինուպոլսոյ, փոքու իմն հաւանէր բանից նորա, և 'ի հասանիլ 'ի մայրաքաղաքն Գրիգոր Գալֆա մեղադրէր զՊատրիարքն, եւ Եղիա չարախօս լինէր զնմանէ առ Ամիրայս, և Պօղոս Պատրիարք առաքեաց զնա 'ի վանս Իւսկիւտարու հանդարտիլ անդ ժամանակս ինչ և ապրիլ ծախիւք իւրովք։

Յովհաննէս վարդապետ Զմիւռնացի հիւրընկալ, զկնի տօնի Պասեքին բազմութեամբ ուխտաւորաց մեկնեցաւ 'ի Յոպպէ քաղաքէ ('ի 27 Ապրիլի) եւ նաւեալ անտի հասին անվնաս 'ի կղզին Հռոդոս, և արդելան անդ աւուրս 40· զի ապստամբեալ էին Յոյնք, և էր խռովութիւն եւ երկիւղ մեծ 'ի ծովու· 'ի սպառիլ դրամոց և 'ի կարօտիլ ամենեցուն ծախուց եւ պարենից, էառ Յովհաննէս վարդապետ մուրհակաւ յայլազգի Իպրահիմ անուն նաւապետէ 11,000 դահեկան, եւ բաժանեաց ուխտաւորաց ըստ իւրաքանչիւր պիտոյից· եւ մեկնեալ անտի գտին ճանապարհ 'ի ցամաքէ արք իբրեւ 400 հասին խաղաղութեամբ 'ի Կոստանդինուպոլիս։ Իսկ Յովհաննէս վարդապետ նախ քան զմեկնիլ իւր անտի՝ ետ գրեռինս վանաց և զ40 ուխտաւորս 'ի նաւ ինչ Աւստրիոյ, և 'ի մեկնիլ անտի նաւապետին զկնի աւուրց հասին 'ի վերայ նորա ծովասպատակք Յունաց, առին զնաւն և կողոպտեցին որ ինչ 'ի նմա, եւ գերի վարեցին զարս 16 յազգէ Հայոց 'ի Զամլճայ կղզին· և ետուն գիր ինչ 'ի ձեռս նաւապետին եւ արձակեցին։ Ի հասանիլ նորա 'ի Կոստանդինուպոլիս, բողոք բարձին Հայք առ Տէրութիւնն և առ Դեսպանն Աւստրիոյ և խընդրէին 'ի նմանէ զինչս և զարս· և 'ի բազմանալ բանից եւ վիճմանց յանձն առ Դեսպանն բերել զայնս, եւ խնդրեաց 'ի նոցանէ զտուրմար ընչից և արանց· և նոքա ետուն՝ որ էր 88,072 դահեկան· գրեաց առ Հիւսպատոսն Զմիւռնիոյ գըտանել զնաւն կորուսեալ· զայս գիր առեալ Հայոց հրա-